

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

«ԵՐԵՎԱՆԻ ԼԵՈՅԻ ԱՆՎԱՆ Հ. 65 ԱՎԱԳ ԴՊՐՈՅ» ՊՈԱԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ
ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՅԻ

Ավարտական հետազոտական աշխատանք

Թեմա՝ Կիբերբուլիինգը դպրոցահասակ
երեխաների շրջանում

Կատարող՝ Ստեփան Զորյանի անվան հ. 56
հիմնական դպրոցի Ինֆորմատիկայի
ուսուցչուհի Ելենա Ոսկանյան

Ղեկավար՝ Վարդանուշ Հովհաննիսյան

ԵՐԵՎԱՆ, 2022թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն.....	2
1. Կիրերբուլինգը որպես ռիսկի ֆակտոր դեռահասների մոտ	3
1.1 Բուլինգ	3
1.2 Բուլեր, բուլինգի գոհ	3
1.3 Բուլինգը դպրոցներում.....	5
1.4 Կիրերբուլինգ գաղափարը և դրսևորման ձևերը	6
1.5 Կիրերբուլինգ-ի պատճառները:	9
1.6 Կիրերբուլինգի դեմ պայքարը և դրա կանխարգելման ուղիները:.....	10
2. Գործնական մաս	12
2.1 Գործնական մասի նյութերը	12
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ	17
Գրականություն	18

Ներածություն

Ինտերնետի առկայությունը և սոցիալական ցանցերի զարգացումը շատերին հնարավորություն տվեց ընդլայնել իրենց հաղորդակցության սահմանները: Մեծահասակների համար վիրտուալ ծանոթությունները դարձան լրացում իրենց արդեն իսկ ունեցած իրական հաղորդակցական հմտությունների, իսկ դեռահասները կարողանում են օգտագործել շփման նեոր հմտությունները միեւնույն ժամանակ և կյանքում, և ինտերնետում: Ինչպես իրական կյանքում, այնպես էլ վիրտուալ հաղորդակցության մեջ մարդկանց միջեւ առաջանում են հակամարտություններ: Լուսանկարներ և անձնական տեղեկատվություն տեղադրելով սոցիալական ցանցերում, դեռահասները կարող են դառնալ հանցավոր գործողությունների առարկա: Հրապարակելով գրառումներ, մասնակցելով քննարկումների, նրանք կարող են բախվել իրենց մտքերի եւ տեսակետների սխալ ընկալմանը, ինչպես նաև ոչ ադեկվատ արձագանքի: Ինչպես գիտենք հեռավար հաղորդակցությունները կարող է լինել անանուն, ինչը հնարավորություն է տալիս աննպիսի մարդկանց փոխել իրենց արտաքին տեսքը, տարիքը, սոցիալական կարգավիճակը և նույնիսկ սեռը: Այս պայմաններում դեռահասներին դժվար է հետևել հաղորդակցման էթիկայի կանոններին և հասարակ վիրավորանքները կարող են վերածվել կյանքի և առողջության լուրջ սպառնալիքների, որոնք կարող են շարունակվում են ողջ օրվա ընթացքում: Այսպիսով, առաջանում է կիբերբուլիմգ:

Հետազոտության թեմայի արդիականությունը պայմանավորված է նրանով, որ սոցիալական ցանցեր օգտագործող դեռահասների քանակը օրեցօր մեծանում է, մինչդեռ նրանք չեն տեսնում վտանգ հեռավար հաղորդակցության մեջ եւ շարունակում են մնալ անպաշտպան վիրտուալ աշխարհում (կիբերհամակարգում): Սա, սոցիալական մեծ խնդիր է և կարիք ունի քննարկման ու լուծման մեթոդների փնտրման:

Հետազոտության նպատակն է, դեռահասների մոտ ձևավորել ճիշտ վարքագիծ կիբերբուլիմգի հետ բախման ժամանակ: Եվ այս նպատակը կյանքի կոչելու համար պետք է լուծվեն հետևյալ խնդիրները.

1. Իրականացնել հարցումներ դեռահասների շրջանում՝ «Կիբերբուլիմգը սոցիալական ցանցերում»:

2. Ուսումնասիրել կիբերբուլինգ թեմայի վերաբերյալ տեղեկատվության աղբյուրները:
3. Ձևավորել վարքագծի կանոններ ինտերնետում:

1. Կիբերբուլինգը որպես ռիսկի ֆակտոր դեռահասների մոտ

1.1 **Բուլինգ** (ծաղր, ահաբեկում) կամ **հալածանք**^[1] ([անգլ.](#)՝ *Bullying*), որևէ անձի կողմից ֆիզիկական կամ հոգեբանական ուժի գործադրումն այլ անձի նկատմամբ, որը կրում է շարունակական բնույթ: «Բուլինգ» տերմինն առաջին անգամ գործածվել է 1530 թվականից՝ սկզբնապես նշանակելով «սիրելի», ապա տարբեր ձևափոխություններից հետո, իր ներկայիս իմաստը ստացել է 1710 թվականից: Բուլինգը իրական հաղորդակցման մեջ տեղի է ունենում տարբեր տարիքային խմբերում, օրինակ, աշխատանքային խմբերում կամ բանակում, բայց ամենից հաճախ այն նկատվում է դեռահասների շրջանում:

Բուլինգի ենթարկվող անձը համարվում է բուլինգի զոհ, իսկ բուլինգի ենթարկող անձին համարում են բուլեր: Բուլինգը բաժանվում է մի քանի տարատեսակների՝ **կիբեր-բուլինգ**, որը իրականացվում է համակարգչի (ինտերնետի) միջոցով, **ֆիզիկական բուլինգ**՝ հարվածելու, ծեծի միջոցով, **վերբալ կամ բառացի բուլինգ**՝ պիտակավորման, ծաղրական անունների միջոցով, և **հարաբերական բուլինգ**, որի միջոցով փորձում են մեկուսացնել մարդուն իր շրջապատից և կանխամտածվածորեն բացառում նրան հասարակությունից: Բուլինգի զոհ հիմնականում դառնում են հասարակության մեջ իրենց տեղը ոչ ամբողջությամբ գտած անձինք, կամ այն անձինք որոնք ունեն որոշակի արտաքին, ֆիզիկական, արտաքին թերություններ՝ մեծ քիթ, տգեղ արտաքին, կաղ ոտք և այլն: Բուլինգի զոհ դառնալը շատ առումներով կապված է երեխաների դաստիարակությունից, ընտանեկան մթնոլորտից, որը նույնպես անդրադանում է երեխայի ինքնագնահատակի ձևավորման վրա:

1.2 Բուլեր, բուլինգի զոհ

Դիտելով մի շարք աղբյուրներ, տեսնում ենք, որ բուլինգը ամենուր է՝ տանը դպրոցում, ինչքան էլ որ զարմանալի է աշխատավայրում, բակում: Շատ հաճախ բուլեր

դառնում են այն անձինք ովքեր իսկապես կարիք են զգում ինքնահաստատման, իսկ երբեմն որևէ մեկին վնասելու ցանկությունը լինում է նախանձից:

Փորձերը ցույց են տվել, որ բուլերները հիմնականում լինում են այնպիսի ընտանիքներից, որտեղ գործածվում են ֆիզիկական պատիժներ, և նրանց ծնողները իրենց երեխաներին դաստիարակում են այնպես, որ յուրաքանչյուր խնդիր կարելի է լուծել ուժի, բռնության միջոցով: Հետազոտությունների արդյունքները ցույց են տալիս, որ բուլերների 60 տոկոսը արդեն քսանչորս տարեկանում գործած է լինում ամենաքիչը մեկ հանցանք: Բուլիինգի զոհ դարձածները հիմնականում լինում են ոչ ապահովված ընտանիքներից, երբեմն նաև ծնողազուրկ, քանի որ նման մարդկանց վիրավորելը շատ ավելի դյուրին է: Բուլիինգի զոհ դարձածները հիմնականում ներփակված են լինում իրենց մեջ, չեն կիսվում ոչ ոքի հետ, և կարծում են, որ դա ամենաճիշտ լուծումն է: Բուլիինգի զոհ դարձածները ձեռք են բերում վախ դպրոցի հանդեպ, համարում են դպրոցը տխուր, ոչ ապահով վայր: Ըստ հետազոտության արդյունքների ութերորդ դասարանի ամերիկացի աշակերտների 7% մնում է տանը ամսական մեկ անգամ, քանի որ վախենում է բուլիինգի զոհ դառնալուց: Բուլիինգի զոհ դարձած մարդիկ ունենում են վատ և տհաճ զգացողություններ, նրանք ունենում են ամոթի, վախի զգացում, դառնում են դյուրագրգիռ, մտածում են, որ իրենք շատ վատն են, ունենում են շատ ցածր ինքնագնահատական, և գնալով վերանում է նրանց մեջ ինքնահաստատվածությունը, նրանք չեն ցանկանում հաճախել դպրոց, սկսում են խուսափել հասարակական վայրերից, չեն հաճախում երեկույթների, սկսում են մեկուսանալ հասարակությունից, ներփակվում են իրենց մեջ, որը կարող է հանգեցնել հոգեկան շեղումների, և այս ամենից ազատվելու միակ ուղին, ցավոք, նրանք գտնում են ինքնասպառության մեջ:

Մեջբերում բրիտանական ամենահանրահայտ պարբերականներից մեկի 2014 թվականի դեկտեմբերի հինգի հոդվածներից, որի վերնագիրն էր.

«Ողբերգություն, տասներկու տարեկան տղան ինքնասպան է եղել, քանի որ նրան ծաղրել են երկրպագուների թիմում միակ տղան լինելու համար»: Հոդվածում ասվում է, որ Ռոնի Շիմիզան, ով սովորում էր Կալիֆոռնիայի ամենահայտնի դպրոցներից մեկում, միշտ բողոքում էր, որ բազմակի անգամներ դարձել է բուլիինգի զոհ: Որոշ ժամանակ անց Ռոնին դուրս է գալիս դպրոցից և անցնում տնային ուսուցման, բայց ծաղրանքները շարունակվում

էին: Նրան ծաղրում էին թիմում միակ տղան լինելու համար, և պիտակավորում էին «gay» (նույնասեռական) անվանումը: Նրա ընկերները պատմում էին, որ Ռոնին շատ ընկերասեր և ժպտերես անձնավորություն էր, և երբեք ուշադրություն չէր դարձնում շրջապատում հնչող վիրավորանքներին:

Այս հոդվածը ապացույց է այն բանի, թե ուր կարող է հասնել մարդկային դաժանությունը և անարտությունը: Շատ դժվար է հավատալ, բայց նման բաներ նույնպես լինում են, և կան նաև մեր շրջապատում, և ոչ ոք չպետք է թույլ տա, որ նման դեպքը փչացնի որևէ մեկի կյանքը:


Բուլիինգն արգելվում է օրենքով

Շատ կարևոր է իմանալ, որ բուլիինգը արգելվում է օրենքով: Մի շարք երկրներ, ինչպիսիք են Կոլումբիան, Միչիգանը, Մոնտանան, Յուտահային Դակոտան, Յարավային Դակոտան, բուլիինգը դատապարտում են օրենքով: ԱՄՆ-ի քառասունհինգ նահանգները նույնպես ընդունել են հակաբուլիինգային օրենքներ:

1.3 Բուլիինգը դպրոցներում

Դպրոցներում հանդիպող բուլիինգը համաշխարհային խնդիր է, որը կարող է ունենալ վատ հետևանքներ դպրոցական միջավայրի համար, և կարող է խախտել այն օրենքը, որով յուրաքանչյուր երեխա իրավունք ունի ապահով կրթության: Բուլիինգի երևույթը քննարկել են մի շարք հայտնի հոգեբաններ, հետազոտողներ, կրթական հաստատություններ, այս առումով հատկապես ակտիվ մասնակցություն են ունեցել

Բուլիինգի շրջանակ



Սկանդինավյան մի շարք երկրներ, Մեծ Բրիտանիան, Ճապոնիան, բայց դա չի նշանակում, որ այս հարցը չեն բարձրաձայնել այլ, ոչ այդքան զարգացած երկրներ: Այս հարցը արդիական է այնտեղ, որտեղ կա դպրոցական միջավայր, կամ ընդհանրապես միջավայր: Բուլիինգը ըստ ձևերի կարելի է բաժանել երկու խմբի՝ ուղղակի և անուղղակի: Ուղղակի բուլիինգի դեպքում դրսևորվում են հետևյալ վարքային ձևերը. Հարվածել, ծեծել, գողանալ, ծաղրել, անընդհատ բարացնել, վիրավորել, սպառնալ: Իսկ անուղղակի բուլիինգի դեպքում բուլիինգի զոհին մեկուսացնում են իր միջավայրից՝ ընկերներից, կանխամտածված մեկուսացնելով նրան այդ միջավայրից: հետազոտությունները փաստում են, որ ուղղակի բուլիինգի ձևը հիմնականում բնորոշ է տղաներին, իսկ անուղղակի բուլիինգի ձևը՝ աղջիկներին: Ուղղակի բուլիինգը ավելի հաճախ հանդիպում է կրտսեր դպրոցի, երբեմն էլ միջին դպրոցի երեխաների մոտ, իսկ անուղղակի բուլիինգը արդեն ավելի հասուն տարիքում՝ միջին դպրոցում: Չնայած այս դասակարգմանը, և անուղղակի, և ուղղակի բուլիինգը հանգեցնում է նույն արդյունքին՝ մարդու ֆիզիկական և հոգեբանական ճնշվածության:

1.4 Կիբերբուլինգ գաղափարը և դրսևորման ձևերը

Կիբերբուլինգ տերմինի մասին լսել ենք բոլորս, բայց քչերս գիտենք դրա նշանակությունը: Տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացման հետ ժամանակակից հասարակության մեջ շատ երեւույթներ ձեռք են բերում նոր առանձնահատկություններ: Մալիովին վերաբերում է սոցիալականացման երեւույթներին եւ ամենօրյա հաղորդակցությանը: Փորձագետները նշում են, որ սոցիալականացման գործընթացը ավելի ու ավելի է տեղափոխվում ինտերնետ: «Կիբերբուլինգ» տերմինը գիտական շրջանառության մեջ է մտցվել կանադացի մանկավարժ Բիլ Բելսիի կողմից՝ նշելով անհատների կամ խմբերի կանխամտածված, կրկնվող թշնամական վարքագիծ, որոնք մտադիր են վնասել ուրիշներին՝ օգտագործելով տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաները : «Կիբերբուլինգ»-ը մի երեւույթ է, որն առաջանում է ինտերնետ միջավայրում և ներառում է բջջային հեռախոսների, էլեկտրոնային փոստի, ինտերնետի, սոցիալական ցանցերի, բլոգների, չաթերի օգտագործումը՝ անձին հետապնդելու, նրա մասին գաղտնի տեղեկություններ տարածելու, մարդու պատիվն ու արժանապատվությունը վարկաբեկելու համար:

Կիբեռհարձակման ժամանակ նպատակը հաճախ հետապնդում է ոչ թե անձնական վիրավորանք, այլ հանրային նվաստացում: Հետևաբար, վիզուալ նյութերը հասանելի են դառնում առավելագույն թվով մարդկանց, նույնիսկ անձանոթներին. դրա համար դրանք տեղադրվում են հատուկ վեբ էջերում, ֆոտո և վիդեո հոսթինգում, սոցիալական ցանցերում՝ զոհին վնասելու կամ խայտառակելու նպատակով: Այլ կերպ ասած, ինտերնետ ոտնձգությունը համակարգված գործողություն է ինտերնետում, որը ուղղված է մարդու բարոյական «ծեծին»: Կիբեռբուլինգը առցանց հարձակումների ամենաքայքայիչ տեսակներից մեկն է, քանի որ հարձակվողները երբեմն զոհին պատճառում են ամենամեծ հոգեբանական տրավմա և նվաստացում: Սովորաբար կիբեռբուլինգը արտահայտվում է զոհին սպառնացող հաղորդագրություններ ուղարկելու կամ սոցիալական ցանցերում նվաստացուցիչ լուսանկարներ և տեսանյութեր տեղադրելու կամ նույնիսկ կեղծ կայքեր ստեղծելու միջոցով, որոնք նվաստացուցիչ են զոհի համար: Կիբեռհետապնդման հետևանքները հաճախ ճակատագրական են:

Սիմխովիչ Վ.Ա.-ն, հղում անելով Կովալսկի Ռ.-ի, Լամբեր Ս.-ի և Ագաթաթոն Պ.-ի աշխատություններին, նշում է համացանցային ահաբեկման մի քանի տարածված ձևեր.

- 1) **Բացառում կամ օստրակիզմ.** Կիբեռհարձակման ամենաանվնաս ձևերից մեկը: Բացառում ասելով նշանակում է անձի մերժումը որոշակի թիմում, որը կարող է ներկայացված լինել փակ սոցիալական խմբի կամ տեղայնացված համայնքի կողմից: Առաջին հայացքից առցանց համայնքներից դուրս մնալը կարևոր չի թվում: Մակայն, եթե տվյալ համայնքը նշանակալի է, և անձը զգում է իր պատկանելությունը, ապա բացառման քաղաքականությունը կարող է ընկալվել որպես սոցիալական մահ:
- 2) **Ֆլեյմինգ (բոցավառվող).** Կիբեռհարձակման ամենաեմոցիոնալ ձևը. Անգլերենից թարգմանված նշանակում է բռնկում: Ֆլեյմինգ-ը «փաստարկ հանուն վեճի», հաղորդագրությունների փոխանակման գործընթաց է բազմաթիվ օգտատերերի ցանցային հաղորդակցության վայրերում, ինչպիսիք են զրուցարանները, ինտերնետ ֆորումները, սոցիալական ցանցերը և այլն: Ֆլեյմինգը ներառում է նաև թափանցիկ ակնարկներ, ոչ միանշանակ կատակներ, կոպիտ հայտարարություններ և չհիմնավորված քննադատություն, անհեթեթ հայտարարություններ, անձնական պնդումներ, զրուցակցի մտավոր ունակությունների քննադատություն:

3) **Կիբեռստրոլինգ**. Ի սկզբանե «թրոլինգ» տերմինը նշանակում էր խայծով ձուկ որսալ, բայց հետո սկսեցին օգտագործել որպես սոցիալական սադրանքի կամ ահաբեկման ձև առցանց հաղորդակցության մեջ, որն օգտագործվում է ինչպես հրապարակային, այնպես էլ անանուն կերպով: Սադրիչները օգտագործում են այլ մարդկանց «թույլ կետերը», որպեսզի մանիպուլյացիների միջոցով վայ ելեն նրա «պայթյունը»:

4) **Cyberstalking Կիբեռփետապնդում**. Իմաստով մոտ է կիբեռ-թրոլինգին, բայց ավելի ազդեցիկ: Սա տուժողի նկատմամբ էլեկտրոնային հաղորդակցության միջոցով վախեցնելու ձև է՝ ուղարկելով երեխայի ֆիզիկական բարեկեցությանը կամ նրա անվտանգությանը սպառնացող (սպառնալիք պարունակող) հաղորդագրություններ:

Կիբեռտոտնվածության տարբերակներից է նաև **սեքսթինգը**՝ կիսամերկ կամ մերկ մարդկանց հետ լուսանկարների, տեսանյութերի տարածումն ու հրապարակումը: Եվ որքան մեծ են երեխաները, այնքան ավելի հավանական է, որ նրանք կներգրավվեն սեքստինգում:

Կիբեռբուլինգի գոհ հիմնականում դառնում են այն դեռահասները, որոնք ծնողների հետ վստահելի հարաբերություններ չունեն: Այս մասին հայտարարել է հոգեբանական գիտությունների թեկնածու, ԵՊՀ անձի հոգեբանության և մասնագիտական գործունեության գիտահետազոտական լաբորատորիայի գիտաշխատող Դիանա Սարգսյանը՝ ներկայացնելով «անձի անվտանգության հոգեբանություն» հասկացության հետազոտության արդյունքները: Նրա խոսքերով՝ հետազոտության շրջանակներում առանձին հոդվածով ուսումնասիրվել է դեռահասների շրջանում կիբեռբուլինգի հարցը: *«Մենք դիտարկեցինք այն հարցը, թե ինչ բացասական հետևանքների է բերում առցանց երևում իր երեխայի գործունեության մասին ծնողների չիմացությունը»*, - ասել է նա: Սարգսյանը նշել է, թե խնդիրն այն է, որ շատ ծնողներ չեն պատկերացնում, թե ինչպես կարող են վերահսկել իրենց երեխայի գործողությունները առցանց երևում, նրա չափազանց տարվածությունը համակարգչային խաղերով և գովազդի հեղեղը, որը թափվում է երեխայի վրա ինտերնետում:

«Այնուամենայնիվ, դեռահասների շրջանում կիբեռբուլինգի և նույնիսկ կիբեռթրաֆիքինգի խնդիրներն ուսումնասիրելիս վեր են հանվում ընտանիքի խնդիրները: Հոգեբանության տեսակետից խնդիրն այստեղ ոչ այնքան նորագույն տեխնոլոգիաներն են, որքան ծնողների եւ երեխաների միջև վստահության անբավարարությունը: Շատ հաճախ, երբ դեռահասները դառնում են կիբեռբուլինգի կամ կիբեռթրաֆիքինգի գոհ, ծնողները երկար

Ժամանակ այդ մասին չեն իմանում: Միայն այն ժամանակ, երբ ոստիկանությունը միջամտում է կամ գործը հասնում է ինքնասպանության, ծնողն իմանում է, որ վերջին կես տարում երեխան ենթարկվել է հոգեբանական գրոհի, այդ թվում՝ սեռական բնույթի»,- նշել է հոգեբանը:

Շատ հաճախ դեռահասները սոցցանցերում ներգրավվում են աղանդավորների կամ որևէ ենթամշակույթի խմբերում, երբեմն նրանց ստիպում են հանցանք գործել, հիմնականում՝ գողություն անել:

«Շատ հաճախ դեռահասները շանտաժիստների զոհ են դառնում: Օրինակ, չարամիտները անում են անհարմար լուսանկարներ, կամ համոզում են դեռահասին մերկ լուսանկարվել, կամ պարզապես սարքում են «մերկ» լուսանկար, իսկ այնուհետև փող պահանջում, որ չհրապարակեն այն»,- հայտարարել է Սարգսյանը:

Հայտնվելով նման իրավիճակում՝ դեռահասն ամեն ինչ թաքցնում է ծնողներից, չի դիմում ոստիկանություն, ինչը, որպես կանոն, հանգեցնում է ցավալի հետեւանքների: *«Երեխաները վախենում են խոստովանել ծնողներին, չգիտեն ինչպես իրենց պաշտպանեն, տեղեկացված չեն ինչպես իրենց պահել նման իրավիճակներում: Այս ամենը մեծ խնդիր է, եւ ես կարծում եմ, որ դա մենթալիտետի հարց է»,-* ասել է Սարգսյանը:

1.5 Կիրերբուլինգ-ի պատճառները:

Դեռահասների առցանց ահաբեկման հիմնական պատճառը գերազանցության ցանկությունն է: Դեռահասների համար շատ կարևոր է հասնել հանրային ճանաչման, երբ դեռևս չունեն ռեսուրսներ, ուժ և համբերություն՝ ինքնուրույն հաստատվելու համար: Այս պատճառով է, որ դեռահասները ձգտում են ինքնահաստատվել՝ նվաստացնելով ուրիշներին՝ ուրիշների աչքում: Հասակակիցների ընկերությունում ինքնահաստատվելու կամ հեղինակությունը բարձրացնելու ցանկությունը կարող է բացասական ուղղվածություն ունենալ նրանց համար, ովքեր թույլ են հարմարվելու ունակությամբ, ովքեր ագրեսիվությամբ պայքարում են գերազանցության համար:

Մեկ այլ պատճառ էլ թերարժեքության զգացումն է, որը ենթադրում է նախանձ և վրեժխնդրություն: Անհատի մոտ թերարժեքության բարդույթ կարող է առաջանալ տարբեր պատճառներով՝ խտրականություն, հոգեկան տրավմա, սխալներ, անհաջողություններ և այլն:

Կիրերբուլինգի պատճառները ներառում են հետևյալ ասպեկտները.

1. Գերազանցության ձգտում: Սա բնածին զգացում է, որից մենք երբեք չենք ազատվի, քանի որ այդ ցանկությունը հենց ինքը՝ կյանքն է: Դեռահասների մոտ գերազանցության ցանկության օրինակ կարող է լինել, օրինակ, հասակակիցների խմբում սոցիալական կարգավիճակի համար պայքարը:

2. Անլիարժեքության սուբյեկտիվ զգացումը կամ թերարժեքության բարդույթը մարդու հոգեբանական և հուզական զգացմունքների ամբողջությունն է, որն արտահայտվում է սեփական թերարժեքության զգացումով և իր նկատմամբ ուրիշների գերազանցության իռացիոնալ հավատքով:

3. Նախանձը նույն մրցակցությունն է, միայն թաքնված. մարդը ձգտում է հաղթել, բայց մրցում է, ասես, իր ներսում՝ հաշիվները մաքրելով այն ժամանակ, երբ երևակայական մրցակիցը դրա մասին չի էլ կասկածում:

4. Վրեժ - գործողություն, որն արվում են ավելի վաղ պատճառված իրական կամ երևակայական անարդարությանը համարժեք արձագանքելու մղումից:

5. Ժամանց: Կիրերհարբուլինգը կարող է սկսվել պարզ կատակով, եթե այն հեզնական է: Հեզնական կամ նույնիսկ անվնաս կատակը կարող է ագրեսիա առաջացնել, եթե դրա հասցեատերը հումորի զգացում չունի: Մեկ այլ անձի նկատմամբ հումորը նույնպես համարվում է ինքնավեհացում, ինքնահաստատում՝ դիմացինի հաշվին:

1.6 Կիրերբուլինգի դեմ պայքարը և դրա կանխարգելման ուղիները:

Ներկայումս ժամանակակից դեռահասները սովորել են ինքնուրույն տեղեկատվություն փնտրել համացանցում և ծանոթություններ հաստատել: Բայց միայնակ համացանցի հետ, նրանց համար ավելի դժվար է քննադատաբար գնահատել այն, ինչ գտնում են, տիրապետել դրանց բովանդակությանը և շփվել առցանց համայնքների հետ: Ներկայումս մշակվում են առցանց ահաբեկման դեմ պայքարի ուղիներ և մեթոդներ, որոնք ներառում են.

- անցանկալի բովանդակությունը սահմանափակող տեխնիկական միջոցներ (գոտիչներ, գրաքննություն),

- ահագանգի կոճակներ («բողոք») սոցիալական ցանցերում և կայքերում, որոնք նախատեսված են, տհաճ իրավիճակում կայքի աշխատակիցների միանալու համար,
- անձնական հաշիվների գաղտնիության կարգավորումներ:

Բացի այդ, յուրաքանչյուր օգտատեր պետք է իմանա թե՛ զծերի հեռախոսահամարները և ունենա գործիքներ, որոնցով պետք է զեկուցի այլ օգտատերերի անօրինական վարքագծի մասին:

Կիրառելի հարձակումը կանխելու համար դեռահասները պետք է հիշեն, որ.

- ☞ Չի կարելի տրամադրել անձնական տվյալները ինտերնետում.
- ☞ Պետք չէ բացել մուտք դեպի ձեր էջ օտարներին.
- ☞ Չի կարելի ուղարկել հաղորդագրություններ պատկերներով, որոնք կարող են վիրավորել որևէ մեկին.

☒ Նաև կիրառելի հարձակման ենթարկված դեռահասներին խորհուրդ է տրվում հրաժարվել քննադատությունից և անտեսել հանցագործներին, կիսվեք ձեր փորձով մեծահասակների հետ, փոխեք գաղտնիության կարգավորումները, հնարավորինս քիչ տեղեկություններ հրապարակել ձեր մասին սոցիալական ցանցերում:

2. Գործնական մաս

2.1 Գործնական մասի նյութերը

Հետազոտական աշխատանքը կատարվել է 2022 թվականի հոկտեմբերի 1-ից մինչև հոկտեմբերի 29-ը ժամանակահատվածում: Նախագծի ընթացքում 80 դեռահասների մոտ անցկացվել է հարցում՝ «Կիրերհարձակումը սոցիալական ցանցերում» թեմայով

<https://forms.gle/PPt6sH6FW9sU8uSDA>

Գանցերում»

yelenavoskanyan1418@gmail.com
(без совместного доступа) Сменить аккаунт

1. Դուք օգտվում եք սոցիալական ցանցերից:

Այո
 Ոչ

2. Գիտե՞ք, թե ինչ է կիրերհարձակումը:

Այո
 Ոչ

3. Երբևէ ենթարկվել եք կիրերհարձակման:

Այո
 Ոչ

4. Որքա՞ն հաճախ եք համացանցում նկատում կիրերհարձակման դրսևորումներ:

Մեկ անգամ հանդիպել եմ:
 Բանդիպել եմ քանի անգամ:
 Մնցնիատ հանդիպում եմ:
 Չեմ հանդիպել:

Отменить выбор

5. Եթե սոցիալական ցանցում կիրերհարձակման ենթարկվեք, օգնություն կդիմե՞ք:

Այո:
 Ես չգիտեմ, թե ուր դիմել:
 Կդիմեմ ծնողներին:
 Ոչ, դա անօգուտ է:

6. Գտնո՞ւմ եք, որ ինտերնետ միջավայրը բացասաբար է անդրադառնում ձեզ վրա:

Այո
 Ոչ

7. Ձեր կարծիքով, ինչի համար կարող են մարդուն համացանցում բռնության ենթարկել:

Мой ответ

Հարցաթերթիկի հարցերը կազմվել են ինքնուրույն, հարցերի թիվը՝ 7: Հարցմանը մասնակցել են հիմնականում հ. 56 հիմնական դպրոցի 7-9 դասարանների աշակերտները:

«Գիտե՞ք ինչ է կիրերհարձակումը» հարցին (Գծապատկեր 2) հարցվածների 100%-ից 7 հոգին պատասխանել են բացասական, որը կազմել է 7,8%: Հարցման արդյունքում պարզվել է, նաև

որ աշակերտների մեծամասնությունը (94,8%) օգտվում է սոցիալական ցանցերից և (81,6%) կարծում է, որ ինտերնետ միջավայրն իրենց վրա բացասաբար չի ազդում:


Այդ կապակցությամբ 2020 թվականի հոկտեմբերին նախապատրաստվել և անցկացվել է դասաժամ՝ «Սոցիալական. ցանցեր՝ օգուտ, թե վնաս: Դասաժամի ընթացքում աշակերտներն ներկայացվեցին սոցիալական ցանցերի ստեղծման և զարգացման պատմությունը: Բացահայտվեցին նաև սոցիալական ցանցերից օգտվելու դրական և բացասական կողմերը: Քննարկեցինք հետևյալ հարցերը.

- Որքա՞ն ժամանակ եք ծախսում սոցիալական ցանցերում օրական:
- Ի՞նչ եք կարծում, սոցիալական ցանցերը վնասակար են ձեր առողջությանը:

Արդյունքում պարզվեց, որ աշակերտների մեծամասնությունը սոցիալական ցանցերում անցկացնում է օրական 3 և ավելի ժամ, իսկ ոմանք՝ նույնիսկ ամբողջ գիշեր՝ ընդ որում, գրեթե բոլորը պատասխանել են, որ սոցիալական ցանցերը վնասակար են իրենց առողջությանը (տեսողությունը վատանում է, մեջքը ցավում է): Նման խնդիրներից խուսափելու համար մենք նորից վերհիշեցինք, թե ինչպես պետք է նստել համակարգչի մոտ, ինչպես ճիշտ բռնել հեռախոսը, որ խուսափենք մեջքի և աչքերի լարվածությունից: Դասաժամի ավարտին նրանք դիտեցին «Ամբողջ ճշմարտությունը սոցիալական ցանցերի մասին» տեսանյութը՝ <https://www.youtube.com/c5fa8e9e-524c-4b8a-bf58-a12aba383f9a>: Այս և այլ մնացած հարցերի վերլուծությունները մեզ բավականին խորհելու առիթ են տալիս, քանի որ մեր աշակերտները լավ տեղեկացված չեն կիրբերբուլինգից պաշտպանվելու իրենց իրավունքների և հնարավորությունների մասին, օրինակ այն հարցին թե կիրբերհարձակման ժամանակ կդիմե՞ք օգնության՝ 23,7% չգիտի ում դիմել, իսկ 11,8% գտնում է, որ դա անօգուտ է:

1. Դուք օգտվում եք սոցիալական ցանցերից:


77 օճեՒոՒՅ




Գժապատկեր 1

2. Գիտե՛ք, թե ինչ է կիբերհարժակումը:

77 օճեՒոՒՅ

 Копировать





Գժապատկեր 2

Գժապատկեր 3


3. Երբևէ ենթարկվել եք կիբերհարժակման:

77 օճեՒոՒՅ


 Копировать



4.Որքա՞ն հաճախ եք համացանցում նկատում կիբերհարձակման դրսևորումներ:

 Копировать


77 ответов




- Մեկ անգամ հանդիպել եմ :
- Գրեթե ամեն օր
- Մեծ քանակությամբ
- Չեմ հանդիպել:

Գծապատկեր 4

5.Եթե սոցիալական ցանցում կիբերհարձակման ենթարկվեք, օգնություն կդիմե՞ք:

 Копировать

76 ответов




- Այո:
- Ես չգիտեմ, թե ուր դիմել:
- Կդիմեմ ծնողներին:
- Ոչ, դա անօգուտ է:

Գծապատկեր 5

6. Գտնո՞ւմ եք, որ ինտերնետ միջավայրը բացասաբար է անդրադառնում ձեզ վրա:

 Копировать

76 ОТВЕТОВ



Գծապատկեր 6

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Կիբերբուլինգը դպրոցահասակ երեխաների շրջանում» թեմայով հետազոտական աշխատանքները սկսել են 2022 թվականի հոկտեմբերի 1-ին: Հարցում են իրականացրել 80 աշակերտների մոտ, որի արդյունքում պարզել են, որ որոշ աշակերտներն ենթարկվել են կիբերբուլինգի, իսկ ոմանք էլ եղել են դրա նախաձեռնողները: Շատերը կարծում են, որ սոցիալական ցանցերը վնասակար են իրենց առողջությանը, սակայն, ինչպես պարզվեց, իմ կոցմից անցկացված «Սոցիալական ցանցեր. օգուտ, թե վնաս» դասաժամի և հարցման ժամանակ, աշակերտները տեղյակ են կիբերբուլինգի մասին, բայց երբեք չեն մտածել դրա կարևորության մասին: «Ամբողջ ճշմարտությունը սոցիալական ցանցերի մասին» տեսանյութը դիտելուց հետո շատերն ընդգծեցին, որ կենդանի շփումը շատ ավելի կարևոր է և ավելի լավ, քան վիրտուալը: Եվ որ, իզուր են շատ ժամանակ են անցկացնում սոցցանցերում ու վատնում իրենց ժամանակը: Այստեղից կարելի է եզրակացնել, որ նման միջոցառումների անցկացումը դրական է ազդում աշակերտների վրա, պետք է հնարավորինս ավելի շատ անդրադառնալ այս խնդրին, քանի որ կիբերհարձակումը դեռահասների համար դեռևս ռիսկի գործոն է:

Այսպիսով, ուսումնասիրության այս փուլում մենք կարող ենք եզրակացնել, որ մեր ժամանակներում կիբերհարբուլինգը իսկապես հրատապ խնդիր է, քանի որ այժմ տեղեկատվության սերունդն է, և մարդիկ չեն կարող լինել առանց գաջեթների, նոութբուքերի և բջջային հեռախոսների: Անհրաժեշտ է միջոցներ ձեռնարկել այս խնդիրը լուծելու համար և նախազգուշական միջոցներ ձեռնարկել, որոնք կօգնեն համացանցից օգտվող երեխաներին և դեռահասներին խուսափել ամենօրյա կիբերհարձակման գոհ դառնալուց:

Ուստի մեր գիտահետազոտական աշխատանքները կլինեն շարունակական ապագայում՝ այս թեմայով մի շարք կանխարգելիչ միջոցառումներ իրականացնելու համար:

Գրականություն

- ✓ Անդրեևա Ա. Օ. Մանիպուլյացիա ինտերնետում, Տեղեկատվական անվտանգություն և երիտասարդության շրջանում կիրքեր ծայրահեղականության կանխարգելում (հոդվածների ժողովածու).
- ✓ Բարանով Ա. Ա. Դեռահասների կիրքերհարձակման պատճառների հոգեբանական վերլուծություն: Ուղմուրտի համալսարանի տեղեկագիր. Հոգեբանություն. Մանկավարժություն. Փիլիսոփայություն. - 2015.
- ✓ <https://hy.wikipedia.org/wiki/%D4%B2%D5%B8%D6%82%D5%AC%D5%AB%D5%AB%D5%B6%D5%A3>
- ✓ [Բուլինգի շրջանակ - Начальные классы - Планирование \(multiurok.ru\)](http://multiurok.ru)
- ✓ Բենզինա Է. Ա. Կիրքերհարձակումը որպես դեռահասի հոգեբանական առողջության սպառնալիքի նոր ձև: Համալսարանի տեղեկագիր. Հոգեբանության ժամանակակից միտումները.
- ✓ Բերեզինա, Օ.Ս. Դեռահասների շրջանում կիրքերհարձակման սոցիալական կանխարգելում: Տեղեկատվական անվտանգություն և երիտասարդության շրջանում կիրքեր ծայրահեղականության կանխարգելում (հոդվածների ժողովածու):
- ✓ Կոնդրաշկին, Ա. Վ. Դեռահասների և ինտերնետի շեղված վարքագիծը. սոցիալական իրավիճակի փոփոխություն [Էլեկտրոնային ռեսուրս]. - URL` <https://cyberleninka.ru>:
- ✓ Տեսանյութ «Ցնցող ճշմարտությունը սոցիալական մեդիայի մասին» URL` <https://www.youtube.com/c5fa8e9e-524c-4b8a-bf58-a12aba383f9a>
<https://www.youtube.com/watch?v=nNDzDdOs-5o>